



ՄԱՐԹԱՅ

Ազգային, Քաղաքական, Բանասիրական եւ Զուարճալիք

Ժող. Տարի, Թիւ 30

ՄԱՐԹԱՅ

31 Յունուար, 1898

ՊԱՅՄԱՆՆԵՐ. — Ծաղիկի բաժանորդագինն է **Տարեկան**՝ Պոլսոյ համար 40, Գաւառներու համար 50 դան. : **Վեցամսեայ** Պոլսոյ համար 25, Գաւառաց համար 30 դան. : **Հասք 30 փարայ** : Բաժանորդագրութիւնը թիւի վրայ է, տարեկան բաժանորդները պիտի ստանան **52** եւ վեցամսեայները **26** թիւ Ծաղիկի : Պաշտօնական Գրաստունը յանձն կ'առնէ հասուցանել բաժանորդներուն վճատները,

եթէ Ծաղիկի հրատարակութիւնը ո'ր եւ է արգելի հանդիպի : Ծաղիկի բաժանորդներն իրաւունք ունին 100 այցեխաւս նուէր ստանալու : Հանրօգոյս նիւթերու վերաբերեալ յօդուածներ եւ քրթակցութիւններ շնորհակալութեամբ կ'ընդունուին : **ՀԱՍՅԷ** — Ծաղիկի վերաբերեալ ամէն ինչ ուղղել Պաշտօնական Գրաստունը, Կ. Պոլիս, Սուլթան Համամ, թիւ 14 :

ՀԱՅՈՑ ՓԱԿՈՒԱԾ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Կովկաս Պաշտօնական Թերթին մէջ տպագրուած է Կովկասեան ուսումնական շրջանի հոգաբարձու Պ. Եմնովովիի հետեւեալ հաշիւը հայոց դպրոցներու վերաբերմամբ :

Հայ-Լուսաւորչական եկեղեցական ծխական դպրոցների թիւը 1896 տարւոյն մէջ նշանաւոր չափով պակասել է. 240 դպրոցներէն մնացին միայն 28, որ կը բացատրուի հետեւեալ հանգամանքներով : Համաձայն 1884 թուի փետրուարի 16ին Բարձրագոյն հրամանաւ հաստատուած կանոններու, այդպիսի դպրոցներ կ'անուանուին այն տարրական միջնակարգ եւ երկրորդական դպրոցները, որք կը գտնուին Հայոց եկեղեցեաց եւ վանքերու կից եւ բացառապէս կը պահպանուին եկեղեցիներու եւ վանքերու հաշւով եւ ծխականներու օժանդակութեամբ : Սա՛կայն դեռ 1894 թուին նկատուել է որ երկրին մէջ եղած շատ Հայոց դպրոցներ, որոնց Հայ-Լուսաւորչական հոգեւորականութիւնն կ'անուանէր «եկեղեցական» կը պահպանուէին բացառապէս զիւղական հասարակութիւններու հաշւով, հասարակական համախօսականներու հիման վրայ եւ այդ համախօսականները կազմուած էին առանց վարչութեան տեղեկութեան ու օրինական կերպով չէին հաստատուած, այդ դպրոցներու համար հարկը կը բաժնուէր ժողովրդի վրայ եւ կ'առնուէր ժողովրդէն կառավարչական հարկի հետ միասին եւ մինչեւ անգամ աւելի խստութեամբ քան կառավարչական հարկերը ժողովուած դրամները առանց ու եւ է կօշտօրօյի կը ծախսէին հասարակութիւններէ ընտրուած անձինք, որոնք իրենք իրենց կ'անուանէին «հոգաբարձուներ», ամբողջ հասարակութիւններ՝ որոնց մէջ շատ անգամ կ'ըլլան եւ ոչ Հայ-Լուսաւորչական եկեղեցիի պատկանող

ծխականներ, կ'ենթարկուին բացառապէս Հայոց դպրոցները պահպանելու պարտաւորութեան եւ այդպիսով մեծ վնաս կը հասնի երկրի ժողովրդական լուսաւորութեան գործին, որովհետեւ սպով հասարակութիւնները չեն կարողանար կազմակերպել սովորական տարրական դպրոցները, ընդհանուր հիմունքներով, ամեն դաւանութեանց երեխաներու համար :

Այդ բոլորն ի նկատի ունենալով Կովկասեան պարոն կառավարչապետը 1894 թուին յունիսին առաջարկեց երկրի նահանգապետներուն պարզաբանել թէ ի՞նչ աղբիւրներով կը պահպանուին Հայոց դպրոցները եւ միջոցներ ձեռք առնել, որպէս զի իրաւունք չտրուի եկեղեցական անուանուելու այն դպրոցներուն, որոնք չեն համապատասխաներ վերոյիշեալ Բարձրագոյն հրամանի պահանջներուն, 190 դպրոցներէն այդ ցուցակի մէջ մտան 168, այսինքն միայն 22 դպրոցներ գտնուեցան համապատասխան Բարձրագոյն հրամանին : 1895 թուի գեկտեմբերի 8ին Պ. կառավարչապետը այդ ցուցակն ուղարկեց Կովկ. ուսում. շրջանի հոգաբարձուին, առաջարկելով որ կարգադրութիւն ընէ ընդունել անմիջապէս այդ 168 դպրոցները ուսումն. իշխանութեան իրաւասութեան տակ եւ միաժամանակ զիմեց ամենայն Հայոց Կաթողիկոսին, խնդրելով կարգադրութիւն ընել Հայ հոգեւոր վիճակներին, որ անյապաղ յանձնուին այդ դպրոցները, ուսումնական իշխանութեան : 1896 թուականի սկիզբները ձեռնարկեցին այդ կարգադրութեան գործադրութեան. ժողովրդական դպրոցներու տեսուչները տեղական վարչութեան կամ օստիկանական պաշտօնականներու ու զեկեղեցիներու մասն Հայոց դպրոցները եւ յայտնեցին դպրոցներու կառավարիչներուն ու հոգաբարձուներուն Պ. կառավարչապետի յիշեալ կարգադրութիւնը եւ պահանջեցին որ անմիջապէս այդ դպրոցները յանձնուին տեղա-

կան իշխանութիւններուն : Դժբաղդաբար ոչ մի զպրոց չը յանձնուեցաւ . զպրոցներն կառավարիչները մերժեցին հրապարակաւ առաջադրուած պահանջներուն , պատճառաբանելով թէ այդ մասին կարգադրութիւն չեն ստացած իրենց բարրձագոյն հոգեւոր իշխանութիւնէն , ուստի եւ բոլոր այդ զպրոցները չյանձնուելու պատճառով տեղական ժողովական իշխանութեանց կարգադրութեամբ գոցուեցան :

Պ Ա Ր Ա Հ Ա Ն Դ Ե Ս

Բարեկենդանի առթիւ Բերացոց իրարանցումը մեծ է , հիմա ամեն մարդ փոխանակ զիշերները քնանալու ցերեկները կը քնանայ եւ գրեթէ չատ խանութները ցերեկները դոց՝ գիշերները բաց են , ամեն կողմ առ հասարակ գործունէութիւն տիրած է , մանաւանդ չարաթ զիշերները բոլոր արձարանները յաճախորդներով կը լեցուին , տուններու մէջ գիշերուան ժամը մէկէն պարահանգէսի պատրաստութիւնները կսկսին :

Անցեալները փողոցի մը մէջ պատուհանէ պատուհան երկու օրիորդներ հետեւեալ խօսակցութիւնը կը նշին :

— Թէրէզն պու ազաւ սէնի իլէն կիլլիճէ պալուսա քաչապիլիճիմիլ :

— Էյ սաքընա աղապամ տուեարսա էօլաիլիւմ կիւն տիւր եանի :

— Հայտէ , էյ բէք պէճէրիքսիլ զրգսն , քա ներտէն տույաճագ , հէմ պու ազաւմ էյլէնճէ վարըմը , Բասկալտա կիտէճէք , Ժիւսէֆ տէ , քէնաիլիլի թանըթմայըլ չունարաւ պիր կիւղէճէ էյլէնիլիլ :

— Բէք զօրգարըմ Գաթին , հոգսա ազրուսու կէլմէյէ արզում վար արը , օ գաարիլ զարէլէրինի կէօզիւմիւն էօնիւնէ կէթիրտիքճէ ազըմըն տուարը արընի :

— Պուստա գօրգաճագ պիր չէյ հօգ , աղապան տուտուն ույուտուքսան սօնրա հալաչաճըգ զաչարըգ սէնին իլէն , սապաչայրն երքէն կէլիւ հաթաղըմըգ կիրէրիլ , նէրտէն տույաճագ քի պալոյա կիթմիլիլ :

— Էյ կէճէ ույանըպ հաթաղըմը պօշ կէօրիլլէրտէ :

— Բոպ ար չամպընըն իշինէ պիր պօշ հասարգ դոյ , հասարըղըն պաչընտա պիր գարաթմա պաղլա հասարըղըն իշինտէ հաթըր հօրզանը տա իւստիւնէ չէք պաղարըարսա սէնի սանօրնլար :

— Քա բէք չէթան զրգսն , նէրտէնտէ տիւլիւնտիւն հէր չէյէ տէ չափուճագ քույր պէճէրիլիւն , պիլմէմ քի իւստիւմէ նէ՛ կիլիլիւմ , պիր չէյ ուտուրուրըլ :

— Պաչընտ քէնարըլ ֆըրֆըրըլ քարիշունըն դոյ , մաճանըն էսկիտէն գալմա ճանֆէս ֆիստանըտա չալմար էթ քօքէթ քէօյիլ զըզը օլուրսուն , քիւմէ սէնի թանըմալ , օլտու պիթաի :

— Էլալիլէիլիւմ հօք արը , էլլէրիւմէն թանըյաճագլար :

— Քա քիւմ քիւմէ . . . էլլինի ճէպլինտէն չըլտուրա :

— Էօյլէ իսէ ազիւմիւլ սէօշ , աղապամ վէ տուտում տյուտուլու կիլիլի հալաչաճըգ զաչար սանա կէլիլիւմ , քա տուր մասքէմիլ հօգ նասըլ իտէլիւմ :

— Անթուան իքի թանէ կէթիրէճէք :

— Էօյլէ իսէ տաիյօ ըսիլով պատուհանէն ներս քաչուեցան :

Արձարանի մը մէջ ալ երկու երիտասարդներ հետեւեալ խօսակցութիւնը կ'ընէին :

— Ահաթի թոնի , Ժագ կէլալիմի :

— Սալըր էֆէնտիւմ , բաղ անքոր :

— Էյ , նէ հաիւաճայըլ , պու ազաւմ պալոյա կիտէճէքիլիլ :

— Սանտի :

Էյ սալմա տիւնեալըքճա նասըլսըն , պէնտէ իքի պէյալ վար . սէնտէ՞ նէ վար :

— Պէնտէ էօյլէ չէյ արամա :

— Սէնտէ Քարուչին բարազը կիպի փարա թութմազսն :

— Կինէ պօշ լաֆլար իստէմէմ , էվլէլաէն պէօյլէ՞մի իսիւմ , չիմտի վազըթլար պէօյլէ կէթիրիլ :

— Ճանըմ չագա տէտիւմ , հա պէնտէ հա սէնտէ , չաքրաքընը ծաա պաղալըմ : Այ այ պագ քիւմ կէլիլօր . . . :

— Ժէրօմլարըն զըզը տէյիլ մի իտի :

— Թա քէնաիլի չօգ ժամասէր տըր :

— Թոնի նէրտէ իսէ չիմտի կէլիլ , զիրա փոխասաց կիպի էվտէ լաքըրաքսընը պիթիրմէլի :

— Իչտէ կէլաի :

— Թոնի սէնտէ նէ՞ վար :

— Պէնտէ տիւլ իքի լիրա իքի զուրուչ ուֆաղըլ վար :

— Կէնէ հալան սէօյլէմէյէսին , կէչէն աղաւթի կիպի , իքի մէճիտիյէմ վար տէտին հէփաի հէփաի 5 զըշ . վարըմը :

— Ժը վուլ ասիւր մօնչէր , հալան սէօյլէյէճէք նէ՞ պօրճոււմ վար , կէչէն աղաւմաղալըլան ճէպլիմաէն տիւլտիւ :

— Վուլէթ ֆու մօնչէր , վուլէթ ֆու . գալըն կիտէլիւմ պիրալ հէմէք հէլիլիւմ :

— Կիտէլիւմ ֆագաթ իլքինտէն սէօյլէյիւմ քի պէնտէ փարա հօգ , պու աղաւմ օրթա գիյանըլըմ :

Ալօն ալօն տէժէօնէ էթմէտիւմ տէ գարնըմ զիլ կիպի էօթէյօր , հէմէք հէյէճէյիլ :

— Ծօ նէ տէյօր , պաղաւտան 10 փարալըգ էքմէք 10 փարալըգ փէյնիլ իշինի պիթիրիլ :

— Եւ Սպօնէյէ կէօթիւմէյէճէքիլիլ :

«Ալլա՛հ ազըլ վէրսին» ըսիլով դուրա ելած տաննին երկու զիմակաւոր կիներու հանգիպեցան :

Այս տեսնելուն պէս Բասկալը պօռաց , «գաարիլ իշին չիմտիտէն տամաը պուլտուգ» ,

Դիմակաւոր կանանց մին երիտասարդները տեսնելուն ցած ձայնով , «աման Գաթին արգամըլտան կէլիլօրլար , հիշ աղարըմալն» :

Բասկալ ամենէն առաջ զիմակաւորաց մօտենալով ,

— Մասկարալար , պիլիտէ պէրապէր կէօթիլլիլուսիւլուգ պալոյա :

Դիմակաւորը դիտովր ոչ պատասխանեց :

— Վայ Թօնի, մասկարաւար տիւրի իմիչէր, երբեք չիմտէ նէ գատար կիզլի սրբ վար իսէ սէօյլէյէ պիւրի-րիմ, գիրա քիմսէյէ աղնատամաղլար :

Թօնի նէ սարգընթըլը վէրիյօրսըն, պէլթի պաշգա անկաթէլէրի վար :

— Պէն պու մասկարաւարն կէօզլունէ պէյէնմէյօ-րըմ, պաշգա թիւրլիւ պազըլօրլար :

Օրիորդը ցած ձայնով :

— Վոյ եռմութեադ սուրաթլը ածապա պիզի թա-նըտը՝ մը տէրսին, ըսաւ ընկերուհւոյն :

— Պիր գաչ աւորմ գալտը պալօ գարուսուհա, չա-փուզ հիչ ալտըրմա երբիւ :

— Մասկարաւար բէք աճէլէ էտէյօրսընըզ, պալօ եէրինտէն դաչմազ, սիզէ եէթիւմէք իչիւն աւտէթա գօչ-մայա մէճպուր օլույօրըզ գոչեց Բասկալ :

Թօնի եւ Բասկալ սկսան բարձրաձայն ծիծաղիլ : Այս միջոցին դիմակաւորուհիներն պարահանդէսին գոնէն ներս մտան : Մեր երիտասարդները մուտքը վճարելէ ետքը դրեթէ երկու դիմակաւորուհիներուն ներս մտած ատեն-նին պարասարհը մտան :

Այս միջոցին վալս կը պարէին գինովցած երիտա-սարդներ ցոփուհիներու պարանօք ինքզինքնին բոլորովին մոռցած անձոննի կերպով ցատկոտելով կը պարէին :

Մեր պարոն Բասկալը, «Մատամ սօնզրաքլի գատրի-լէ անկաթէ օլմլումուսուհուզ :

— Պաշգասընը անկաթէ էթտիմ, աֆ իտէրսինիզ :

— Արթիւ մալ կէօզ միւ չըգարըս, պէնի տէ ան-կաթէ էթ :

— Թօնի, նէ օ, լաֆընդա մանի օլմամ :

— Վոյ Բասկալ, գօլթուղունտաքինի նէրէտէն եա-գալատըն, պիրազ էլվէլ սօգալտա աֆրօնթ էտիյօրլար ըտը :

— Բասկալ, պէօյլէ թէրպիյէսիզ աւամլար իլէ նա՞-սըլ կէօրիւչիյօրսընըզ :

— Նէ տիւպազ մատմաղէլ իմիչ Բասկալ, հիտտէթ-լէնմէ մատմաղէլ, հայտէ պիրէր վէնչօ իչէլիմ տէ պա-րըչալըմ :

— Սէնին վէնչօնը գապուլ էտէնլէրտէն տէյիլ իզ :

— Ջաթէն բարասընը պէն վէրէճէք տէյիլ իմ, իս-թէրսէն եէմին էտէյիմ :

— Հայտէ Թէրէզօն, հայտէ, պիզիմ միւսիւ չապա-ճը տըր, տարըլմա կէրչէք կիտէլիմ պիրէր վէնչօ իչէ-լիմ, սէն տէ Բասկալըա Թօնիի ալ տէ պիւֆէյէ կէլսին :

Վերջապէս այս խմբակը պիւֆէն երթալով սեղանի մը բոլորտիքը նստաւ, անմիջապէս կարօնը գալով ճնէ իչէրսինիզ էֆէնտիմ և հարցոց :

ԱՆՏՈՆ ՍԱԳԱՅԵԱՆ

Շարունակելի

ԱՆՏԵԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ

(Շարունակութիւն 29 թիւէն)

— Հանրմ, չըտալը հրամանուցդ գէրաֆէթին չեմ թողուր, առ ի՞նչ խօրաթա է արիւր, զոննըս Ս. Խաչը տեղէն չի փախչիր. էֆէնտիմ վաղն առտու կանախ թող չըլլայ տէ՛ քըչիկ ու շ ըլլայ իշ պէյիս կայ : Ան ուր ուր թէյզէ հանըմը կու բարեհաճի ու հրամանքիդ մեղա-վէօրս ալ հիւաց աւալէթ ուր կանէ իսէ նը՝ հանըմին առ տալէթը ըէտ անիլը բարեկամութեան առէջքը քար մի զնեկէն ֆէրիս չի կայ :

— Նայինք մեր Գարիկ աղան ինչ պիտի ըսէ. չիյտեմ քի :

— Ինչ պիտի ըսեմ քի՝ քէֆինիզէ եա, նասըլ կու-ղէք նէ անանկ ըրէք, պու էլտէ պէնիմ սէօզիւմ կէչ-մէյօր, օնու պէն չօղտան աղնատըմ, քա ան չէ աւմա թէյզէ հանըմը ստահա պաշխա մարդ տալէթ ըրա՞ւ :

— Այո, հարիւր ընտանիք, որոնցմէ հօթանասունը խոտացեր են գալու, անտարակոյս եւ որ իմ միջոցաւ եղած հրաւերն առ ոչինչ չէք համարի :

— Թէյզէ հանըմ, աղէկ ամա՛ առ մեր հիտապին չի դար, հրամանքիդ խելքը տահա ասանկ բաներուն չի հաս-նիր, ես փէք սնանկ խալապալըլի մէջ զլոս չունիմ, սահաթը երեքը գնա՞ց մի իմ քուհա կուգայ, խալապա-լըլը մեր հանըմին սինիլին կը դպչի :

— Մեղայ վրաս բարի, սինիրս ալ ինչ է քի սանքի լախըրտը ըրաւ : Երբ որ չես ուղեր նէ մ'երթար, սինիր մինիր ինչ կը խառնես, հէլէ սահաթը երեքին քնանալդ աւոր խօսք չունիմ :

— Ճանըմ էֆէնտիմ, ալ հրամանքդ ճիւղ ածայիս ախլազ մի բէյտահ ես արեր, քըչիկ մ'ալ ուր ձան չի հէնէն նը՝ հանըմը աւտէթա հիլլէթլի պառաւ մի տի թագ-տիմ անես աչխրքին առաջըր. զաննս ասօր հրամանքդ մատտէլի մի տօլայի հիտտէթ ունէս ու անկիլ է ուր ա-ճալի կը խօրըթիս, հանըմ հէր որքան թէյզէ հանըմըդ ուր աեսած չեմ իսէ տէ մախտու միւպարէք խաթըր կու հարցնեմ, բարեւ կ'անես կ'ըսես ուր դայէթ մէմուհն ին վէ միւսաաթիլ տի դան, մեղափէօրս ալ իչալլահ հիւաց տի գամ ու աս տալէթին վրայօքն իճապ արած ուպու-տիյէթա յատկապէս թագտիմ կու անես, անոնց մի նայիր մեղափէօրս միւսթագիլ խանտըրմիլ կ'անեմ հիւաց կու բերեմ : Էֆէնտիմ առանկ խօրըթա կ'ըլլայ ուր, մարդիկը մեզ մարդու տեղ են դրեր ու տալէթ կ'անեն, ըէտտ անիլը պազ հարաքէթ մին է չըտալը :

— Էֆէնտիմ պու փէք Թօհաֆ, պիլմէմ քի տալէթ պիզէ՞ մի Գարիկ աղայա մը : Տալէթ օլմատըղընըզ վէ ալէլ խուսուս պիլմէտիյինիզ եէրէ կիթմէք իչիւն պու տէրէճէ թէլաչ :

— Էֆէնտիմ, հրամանուցդ համար հին աչխարհքի մարդ է ուր կ'ըսէ նը՝ հախը կու տեսնեմ : Ձէօրէ կու նայիմ ուր նոր աչխրքի խայտէյն ասլա մալիւամթ մի քէսպը չես արեր : Մէյ մարդ մի քանի մին ուր մարդու մէջ վէ մէճլիսներու մէջ մանէ ուր չէլիտ չէլիտ մարդոց

հետ իւրֆէթ ուր փէյտահ ուր անէ նը՝ ան մարդը ան տէրէճէ քէմալէթ քէսպը կ'անէ, էֆէնտիմ մարդն ուր մարդու հետ ուր կու տեսնուի ու իւրֆէթ ուր կանէ նը էնլտի մատտէներէն քէսպը մալիւմաթ կ'անէ ու հոգւով մարմնով մարդ կու հանդիսանայ. զաննա նոր աշխարհքն ալ ասանկ հոգւով մարմնով թէրպիլէլի մարդիկ կու պահանջէ, հրամանքդ աճախպ տալէթ մին ես արեւ ու կու քնանաս տո ուսուլը ապէս բան մին է:

— Գարիկ աղա ճէնապըն տահա պէնիմ էֆքեարըմը աննայամալըն: Պէն օ գաաար գալապալըգ եէրէ ֆա-միլեա կէթիւրէմէմ: Աթալարըմըգա պիւնէրճէ բահմէթ, քիչի կէօրտիւլիւնաէն ազար տէմիլէլի, ֆէնա՞ մը տէ-միլէլի:

— Պէ ճանըմ ֆէօս ազմիշ ըլլալու բան մի չի կայ, հրամանքդ մերաք մի աներ:

— Մեղա զահէր խալապալըլի Գոհաճ չունէինք նոր կը տեսնանք կոր, ժամը հարիւրներով մարդ կը տեսնանք իշ կըլլայ ի՞նչ կ'ընեն:

— Հապա տէմին երթալ չէիր ուզեր կոր տէ՛ ժամ պիտի երթամը մահանա էտիյօր ըտըն, չիմտի նէտէ՞ն կէլէ, նա՞սըլ օլտու քի հալալը չէվիրտին: Ի՞նչ է նէ ան քի չերթալին մինասիպէթսիգ կ'ըլլայ նէ երթանք:

— Հա եա երթանք, բան է օրթայէն կ'ըլլայ նաֆի-լէ տեղը ինչո՞ւ խաթր մնայ տէ կիւճէնթի փէյտահ ըլլայ:

— Անանկ է նէ էֆէնտիմ, ֆիլ վախի սաուգ է ուր հանըմը հիմմէթ կանէ ու կը զրուցէ:

— Անանկ է նէ պարէ վախթովը հաղըր ըլլանք, հայտէ, Սուրբիկ, Բերուզիկ, ասոնք ալ ներսը ի՞նչ կ'ը-նեն, հայտէ դուք ալ հաղըր եղէք:

— Զաթ չաթ:

— Սուրբիկ դուռը ո՞վ է:

— Տէր հայրն է:

— Ողջոյն ձեզ:

— Օրհնեցէք Տէր հայր:

— Տէր պապա, պուլուրտուղուն փէք միւնասիպ օլտու... ինչ էվինէ տալէթիլիգ կիտիյօրուգ, հայտէ ճէնապին տէ պուլուր պէրապէր կիտէլիմ:

— Հա հասկցայ, նշանտուքի տալէթ, էյ պէտք է եա: Տարօք տէվլէթիւնէնիգ եղիցի: Շիտակը փէք մի-նասիպէթը եղաւ, լուսահոգի հայրերնին Աստուած ի դասս արդարոց ընկալցի, մեծ փափաք ունէր այս սղուն հար-սանիքը տեսնալու ամա՛ վերին նախախնամութիւնը այս-պէս կամեցաւ, բարեպաշտ մայրերնին ալ անմխիթար չի մնար, սղան քիչ մը փոքր է ամա սուրը կը չէննայ տէ Աստուծով հօրերնուն պակսութիւնը կը լեցնեն, հէմ Աստ-սւած անխորճ պահէ՛ ստատանայական որոգայթներէն եւ ի տեւական ախտից ազատ կացուցէ, խելքը դուխը սղայ է, անանկ հիմակուաններուն պէս չէ, խելքը միտքը խանութին դործին է:

(Շարունակելի)

ԶԱՓԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԷ

Տարօրինակ այլ սակայն շատ ճշմարիտ իրողութիւն մ'է ժողովրդեան գործածած լեզուին, խօսքերուն եւ բառերուն չափազանցութիւնը, զոր օրինակ:

— Երբ սպաղաւորիդ հրաման մը կ'ընես եւ առաջին անգամուն չկատարեր՝ կը պոռաս, 40000 անգամ ըսի պէ:

— Երբ մէկ բարեկամիդ կ'սպասես որոշեալ ժամու մը, եւ նա 5 վայրկեան կուշանայ, արանեղած դէմքով մը կ'ըսես, «Երկու ժամէ ի վեր քեզի կսպասեմ կոր»:

— Երբ դերձակը բանթալօնդ կը բերէ եւ կը հագնիս. «Աս ի՞նչ է պէ, քիլօմէթիւս մը երկայն ես ըրեր»:

— Երբ տանդ նորոգութեան համար մէկ երկու հա-րիւր դրուշ կը ծախսես, «օխայով ոսկի ծախսեցի»:

— Երբ յուզարկաւորութենէ մը վերադառնաս եւ հարցունեն քեզի թէ քանի՞ քահանայ կար, կը պատաս-խանես. «Ի՞նչ գիտնամ 30—40 հատ մը կային», մինչ-դեռ 8—10 հատ հազիւ կային:

— Երբ երեկոյեան դէմ բարեկամի մը տունը այցե-լես եւ սուրճ հրամցնեն, «Շնորհակալ եմ առտուընէ ի վեր 40 հատ մը խմեցի»:

— Երբ այն օրը անգամ մը միայն գործի մը համար կամուրջէն անցած ես, «այսօր պէլքի տաան անգամ կա-մուրջէն անցայ»:

— Երբ շաբաթ մը կ'ըլլայ ճամբորդութենէ վերա-դարձդ եւ բարեկամներ կը հարցունեն թէ ե՞րբ վերա-դարձար, «Օհ, տարին կը լրանայ կոր»:

— Երբ Գատըղիւզի 5 թիւ շոգենաւով մեկնիս կա-մուրջէն, եւ ժամադրութեանդ մէջ ուշանաս, «Աղբար, չուգենաւը չորս ժամ տեւեց»:

Վերջապէս դեռ խել մը ուրիշ չափազանցութիւններ որոնք բաւական ծիծաղաշարժ են:

Սակայն չափազանցութիւն մը չէ, երբ ըսենք թէ հազարի չափ «Մաղիկ» կարդացող օթխաճիկներ կան:

ՆԿԱՐՆԵՐ

Նազարէթ աղա, լսեցի՞ր, պսակը պիտի քակեն, պաշխասին պիտի առնեն եղեր:

— Կամաց զրուցէ Աստուածդ սիրես, աղջիկս քովի օտայէն կ'իմանայ:

— Ինչո՞ւ:

— Ճանըմ ունեւոր տողրամաճիկ մը հետ նշաներ եմ տարիքոտ է տէյի չուզեր կոր, աս բանը լսածին պէս ետքը հարսնիքին դիչերը իս խաղըր կ'ընէ:

— Ես քեզի խրատ տուող մարդ չեմ ամմա ատ նշանը ետ ընելդ նայէ, զերէ ասոնք նոր օրէնք նոր կա-նոն կը հանեն կոր, 10 տարուան պսակը կը քակեն կոր մեկ օրուանին խօսքը կ'ըլլայ:

* * *

Վուշ էտի առջի բաղնիք երթալս ըլլայ, մէյմընալ թէօպէլէր թէօպէսի:

— Ի՞նչ եղաւ խուժժի տուտու :

— Քա մեղա տա՛նա ի՞նչ պիտի ըլլայ, եւանք պաղ-
նիք գացինք, փայտ չի կայ քիւլանը եղեր տէի քիչ են
վառեր, թիւրիլ թիւրիլ դողալ պաշլայեցինք, պէքէյէ
պէքէյէ ճուրը չի տաքնար, էյ մինք ալ մանղալ կայ
տէյի մէյմէկ խանլէ խմեցինք չլուացուած դուրս ելանք
տէյի հէմ մէնէ թէքմիլ խուռնայի փարա առաւ հէմ ման-
ղալ վառեցինք տէյի չորս օխայ քէօմիւրի փարա տուլինք :

* * *

Գրիգոր աղա, սիւզնիքի իլէ օլան իչի թէսլիյէ էթ-
տի՛ն մի :

— Նէ թէսլիյէ էտէյիմ, պրագտը անասընըն էվինէ
կիթտի պիթտի :

— Հիչ էօյլէ չէյ մի օլուր պիրատէր, պարէ էվին
քահանասընը կէօնտէր համոզոււմ էթսին ալսըն կէթիւ-
րին, նէ սանա եագըչըր նէ օնա :

— Էֆէնտիմ կէօնտէրտիմ, քահանայը ապա տիյնէ-
մէմիչ, ւպէն տիվորս էթտիմ պիթիւրտիմ, սէնի պանա
կէօնտէրէճէյինէ պաշգա պիրինի թիւթիւնիւ սիւքքեա-
նընա կէօնտէրէ իտի 20 փարա վէրիպ պիր Բիւզանդիոն
ալըպ տա օգույա ըտը, չիմտի էօյլէ պիւտիյի կիպի տէ-
յիլ, եէնի նիզամ վար, իսթէրսէմ օթուրուրում, իսթէր-
սէմ կիտէրիմ, տէմիլ, զաւլալը քահանայ չօգ չալըչմըն
տի՛նէտէմէմիչ :

— Վախ, վախ, վախ, վարդապետի կէօրիւրսէն պէն-
տէն սէլամ սէօյլէ, պէնտէն էվլէլ սէն կէօրիւրսէն,
սէօյլէ քի պանա պիր համբերութիւն թէզպիհի տահա
կէթիւրսին քի չէքէյիմ :

* * *

էյ պու պօյաճըլըք քէստի աթտը, Գայսէրլինին
պիրիսի պիր մէրքէպի իւչ տէֆա պօյալայըպ իւչ տէֆա
սահիպինէ սաթմըն տէրլէր իտի իսէ ինանմազ ըտըմ,
Բիւզանդիոնըն ամուսնաթողութիւնը էյէր գապուլ օլուր-
սա էվրօփալըարա կալիպա եէնի պիր իչ տահա չըգա-
ճագ, եանի գարըլարմըզը տա պօյալայըպ շու եէնի
տիվորս սայէսինտէ պիզէ սաթաճագլար ըմըն, Չօգ չէյ
պագալըմ տահա նէլէր կէօրիւրսէն իչիտէճէյիլ :

* * *

Օրիորդ Ֆլօր, կ'աղաչեմ, սեւ կրօն ֆիսթանդ կու-
տա՛ն, վաղը իրիկուն միւսիւ Արթաքիին սուարէն պիտի
երթամ :

— Աֆ կ'ընես օրիորդ, Գաթինին խօսք տուած եմ
պալօ պիտի երթայ :

* * *

Պագսանա ֆէնէրլի, տօղրու եօլտա ֆէնէրի եագմըն
քիմի՞ արայօրսըն :

— Մասգարա արայօրում գարտաշ, պու սէնէ տօղ-
րու եօլտա պէնտէն պաշգասընը կէօրէմէտիմ :

* * *

Կնիկ ես քահանայ պիտի ըլլամ :

— Ատ ո՛ւրկից հանեցիր :

— Ո՛ւրկէց պիտի հանեմ, Բիւզանդիոնին մէջ կար-
դացի որ ամուսնաթողութիւն պիտի ըլլայ եղեր, հար-
կաւ հարսնիքները պիտի չատնան ես ալ գիշեր ցերեկ
հարոնիք պիտի երթամ :

— Ես անանկ խենդիս ատէթը չիյտեմ, ես երէցկին
չեմ ըլլար, մեր գիտցած տէրտէրները մինակ հարսնիքի
չեն երթար, մեռելի ալ կ'երթան :

— Քա կնիկ իմ երթալիք հարսնիքներն ալ մեռելի
կը նմանի, մարդ մը որ կնիկը ողջ, զաւակները օրթան,
երկրորդ անգամ պսակ ըլլայ նէ ողջ ողջ մեռել մըն
ալ ան կըլլայ :

ԼԻԻՓՃԻԷՆՑ ՏՈՒՆԸ

Արտը պօղուք մահալէսի

Ազմօտէ սու Մաղիկ :

Ըստ ձեր հրամանին եւ հրահանգին կը փութամ տե-
ղեկագրել ձեզ վերոյգրեալ տան մէջ անցեալ չաքաթ գի-
շերուան անցած դարձածը :

Տան անդամներն են, Ստեփանիկ աղա Լիւփճեան
եւ կինը Տիկին Վառվառեայ, իրենց երեք աղջիկներով,
Օրիորդ Զապէլ, Վիրգին եւ Պէթթիւ, որոնց տարիք-
ներն 28, 25 եւ 22, Ասոնք 12 տարեկան պզտիկ եղ-
բայր մ'ալ ունին Օննիկ անունով :

Շքեղ եւ ճոխ երեկոյթի մը (կամ սուլառէի մը) նախ-
նական պատրաստութիւնները կը տեսնուին : Տան մէջ
բաւական իրարանցում կայ :

Կարեւոր է սակայն հարեւանցի տեղեկութիւն մը
տալ սոյն ընտանիքին անցեալին եւ ներկային վրայ :

Ստեփանիկ աղան (գրեթէ 55 տարեկան) որ ժամա-
նակաւ իր հօրմէն 10000 ոսկի ժառանգած է, ամուսնա-
ցած է Օր. (այժմ տիկին) Վառվառեային (55 տարեկան)
հետ ասկէ 29 տարի առաջ, Փոխանակ այդ 10000 ոսկին
չանցնելու, Ստեփանիկ աղա ծայրէն բռնած սկսեր է
ուսել, ուսել, մինչեւ որ վերջին մէկ ոսկին ալ հատեր
է : Է՛հ, 10000 ոսկին՝ 29 տարուան մէջ ուսել, այս ալ
մեծ յաջողութիւն մ'է : Ի՞նչ միտասե՞սնե՞ր կան որ ա-
տանկ պատկառելի դումար մը երկու, եւ մինչեւ իսկ մէկ
տարուան մէջ վատնած են :

Ստեփանիկ աղա այլ եւս յոյս չունի դործ մը գըտ-
նելու : Աղջիկները յասած են ոչ միայն տարիքով, այլեւ
քօթէզանական հմտութեամբ ալ : Ի՞նչ ընելու է : Այր
եւ կին երկար բարակ մտածելէ վերջ կ'որոշեն իրենց
պէս ինկած մարդոց զրութեան հետեւիլ, այսինքն շիւշի-
նիսթիւն, բան մը որ շատ դիւրին էր, բան մը որ շատ
դիւրին է, քանի որ երեք շատ սիրուն եւ հրապուրիչ
աղջիկներ կային . . . իբր գրամագլուխ : Շիտակը այս
լիւփճեան գործը գէշ չէ եղեր, բայց ինչ օգուտ որ
աղջիկ չունիմ :

Ժամը երկուքն է : Ծաշը աւարտած է :

Ստեփանիկ աղա. — Վառվառ տա աղջիկներուդ ը-

սէ մէյմէկ անդամ պէզիկը, բօքէոք, պոխը մեղք ընեն, անկէց ետքն ալ պաքառային իլէն վէնթէ-էօնին թուղթին նշաններն ալ աղէկ պէլլէմիշ ընեն:

Վառվառ. — Դուն հոգ մի ընեն, չէյթան չէրիճի բաներ են անոնք:

Ստեփանիկ աղտ. — Հա', նայէ մոռցայ, Օննիկին ալ սըխը մը սլառու իրելու է որ չեյլայ չօլքալ բաներ ընէ. անցած գիշերուանը միտքդ է ես վէնթէ-էօնին ասեմը Զապէլին երեւին պոռալը՝ «չորսնոց է, թուղթ առ» ըսելը:

Վառվառ. — Դուն հոգ մընեն, ամէն բան կարգին է:

— Աման, զէրէ վերջը խախքին դուն ենք: Հէմ աս գիշեր ասնգ գոնէ գոնէ 15 ոսկին շտկել ու է. չէ նէ վաղը միւս օր, պախալ, չէքէրլանէճի, ֆիլան ֆիլան կը անկուին:

— Դուն հոգ մընեն:

Քիչ մ'ալ աղջիկները մտիկ ընենք:

Զապէլ (թուալէթը աւարտելով) — Իշտէ ես եղայ: Աղւոր չեղա՞ւ սա ֆրիդիկներս. կինէ աս գիշեր Յովսէփին հետ գործ ունինք. ֆրէ՛շք: Ամա չիտակը խեղճ տղան կը մեղքնամ կոր, նոր խանութ բացեր է, առած ստակը կուգայ հոս կուտայ կոր:

Վերդին. — Էյ աման դուն ալ, հոգ նայէ Անտոնը ինչպէս քէյֆի քէյֆի կուգայ քանի մը ոսկի կուտայ կերթա: Ամա երբեմն բան մը իշտէ բան մը կուգէ աէ կանէ եղեր — բէ՛հ, ի՛նչ կըլլայ:

Պէաթրիս. — Շիտակը իմ Տօթթօրս ամենէն աղէկն է. հաշիւը գիտէ կոր. ձեզի բան մը ըսեմ. աման քու գում պապային մամային բան մը չըսէք հա':

Զապէլ եւ Վերդին. — Ձէ՛քա խենդ:

Պէաթրիս. — Տօթթօրը անցած գիշեր խօսք տուաւ որ ինծի պիտի առնէ:

Զապէլ եւ Վերդին. — Իրա՞ւ:

Պէաթրիս. — Հապա եւ

— Դուն է, մարդ եկաւ:

Խումբ մը հիւրեր սանդուխներէն վեր ելնելով աւջօնէն ներս կը մտնեն, Հաղիւ թէ քանի մը վայրկեաններ կանցնին եւ անա զոան զանգակին ձայնը կելլայ: Ուրիշ խումբ մ'է. Վերջապէս մեծաւ մասամբ Լիւքճիական խումբեր կուգան կը ժողովուն վստն սօքսեղոյ եւ շորքեղոյ վիրհարս, քօթէական դրոթեմաք, սալօնական հեշտաւթեմաք, քծնելով, չոյելով, քսուքտելով, սիւմուտելով եւ մասամբք նորին:

Դաշնակ կայ. զարմանալի բան

Քիչ մը պարկէ վերջ, հիւրերու խոշորիկէ մէկ մասը խումբ խումբ թղթաղաղի կը նստի: Իւրաքանչիւր խմբին թուղթ կը բաժնուի: Ոմանս՝ Պէզիկ, ոմանս՝ Պաքառա, ոմանս՝ Բօքէո, ոմանս՝ Վէնթէ-էօն եւայն: Թուղթէ չախորժողներն ալ կը շարունակեն պարել:

Հոս կանգ կառնենք, յաջորդ թուով շարունակելու համար այս «ընտանեկան, մտերմական եւ խիստ բարոյական» ու անմեղ» երկեղոյին նկարագրութիւնը:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ս. Պատրիարք Հայրը ՇԲ. առտու շնորհաւորական այցելութիւն տուաւ ռուս զեմպան Մ. Զինովիեւի:

— Ֆրանսական զեմպան Մ. Գանսոն 500 ֆր. նըւիրեց Բերայի աղքատախնամին:

— Ս. Պատրիարքը ռուսահայ մեկենաներէն Աղա Իսահակ Ժամնարեանցի մահուան առթիւ՝ վշաակցական կոնդակ մը զրկեց հանգուցելոյն հարազատին ի Բեդերսպուրկ:

— Ս. Պատրիարքն Ամերիկացի բարեգործ Օր. Պըրճիսի ձեռք, Լոնտոն օրհնութեան կոնդակ մը զրկեց, որ պիտի յանձնուի այն կրօնական Բնկերութեան որ դաւառացի կարօտելոց համար անցեալները նպաստի գումար մը զրկած էր ի Պատրիարքարան:

— Պալքէսէրէն առաջն. Տեղապահ Տ. Վահան Ծ. վարդ. Պատրիարքարանի հաղորդած նամակէն կ'իմացուի թէ ի մէջ այլոց երկրաշարժի հետեւանքէն 10 հայ վիրաւորեալներ կան, եւ մէկ հայ զոհ եղած է: Եկեղեցւոյն երկու անանդատուներուն պատերը քիչ շատ ճաթառած են: Յոյներէն ալ 7 վիրաւոր կայ, եւ ասոնց եկեղեցին ու դպրոցը քիչ շատ ճեղքուած են: Իսկ Իսլամներէն՝ 100 հոգիէն աւելի վիրաւոր, եւ բաւական թուով ալ մեռած կան, թող այլ եւ այլ շէնքերու, ու պաշտօնական հաստատութեանց խախտուիլն ու աւարտմանը: Երկրաշարժը տակաւին կը շարունակէ պարբերաբար:

— Բերայի քարոզիչ Տ. Հմայեակ Եպիսկ. Դիմաքսեանի նախաձեռնութեամբ եւ Բերայի Թաղ. Խորհրդոյն հաւանութեամբ, հանգանակութեան ձեռնարկուած է Բերայի մէջ՝ ի նպաստ Մանգրուեի Եփեսարի տէր ու տընօրէն Փանոսեան կարապէտ էֆ. Երուս հիւանդութիւնն այս օրերս աւելի սաստկացած է:

— Իզնաւի մէջ կը կարգանք. «Կաւկասէ մէջ հրատարակեալ հայերէն Արձագանք լրագիրն իր խոտլարարական հրատարակութեանց համար, զաղրեցաւ Կաւկասի կուսակալին հրամանաւ»:

— Ս. Պատրիարքը բաւական ապաքինած ըլլալով, Պատրիարքարան իջաւ եւ զբաղեցաւ օրուան կարեւոր գործերով: Ն. Սրբաղնութիւն Բարեղի, Աղթամարայ, Վանայ եւ ուրիշ կարօտեալ գաւառաց նպաստի գումարներ զրկեց երէկի սուրհանդակով:

— Հինգշաբթի օր Հայ. Հռովմէականաց Բանկալթիի Ս. Յակոբայ Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը Բերայի Հայ եւ Հայ կաթողիկ ընդհանուր կարօտելոց բրինձ եւ հաւ բաշխեր է:

ՆՇԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Հինգշաբթի օր Ազգ. Պատրիարքարանին մէջ տեղի ունեցաւ Մանուկեան Մեծ. Յարութիւն էնէնտիի դուստր Օր. Զարուհիի նշանախօսութիւնն Մեծ. Սմբատ էֆ. Բեաթրիպեանի հետ: Երկու կողմէ աղգականներ եւ բարեկամներ ներկայ էին այս շքեղ հանդէսին: Ս. Պատրիարք Հայրը որ ներկայ էր բարեմաղթութիւններ եւ օրհնութիւններ ուղղեց երկու կողմերուն:

Կատարուեցաւ նաեւ նշանախօսութիւնն Մեծ. Մարգար էֆ. Ունճեանի ընդ Օր. Ֆուլիկ Բէմաճեանի: Ս. Պատրիարք Հայրը նոյնպէս երկու խօսեցեալներուն իր հայրական օրհնութիւնները տուաւ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԵՐԿՐԱՇԱՐԺ

Գարապիէ Յունվար 27 թուով կը հեռագրեն թէ Կեպուտ գաւառակի կեդրոնն ալ վնասուած է երկրաշարժէ : Կ. Պոլսէ զրկուած յանձնաժողովոյ անդամներէն Ճէվատ պէյ Կեպուտ երթալով հեռագրեր է թէ 250 կարօսելոց հաց, բրինձ եւայլն բաժնուած է եւ թէ վնասեալք պատասխարուած են : Պալքէսէրի մէջ Բշ. առտուէն մինչեւ Գշ. երկու անգամ երկրաշարժի ցնցում զգացուած է : Զանազան տեղեր մզկիթներ շինուած են : Տաղաւարներու շինութիւնք կը շարունակուին եւ ժողովուրդը կը պատասխարուի, ամէն օր ուտելիք կը բաժնուի ժողովրդեան : Թէ Պալքէսէրի եւ թէ զիւղերու մէջ վիրաւորեալք կը դարմանուին : Պալքէսէրի, երկրաշարժէն վնասելոց ի նպաստ կատարուած հանգանակութեան զուտ մարն հասաւ 73,600 զրուշի :

Անցեալ կիրակի Իզմիրի, Մէնէմէնի, Այտրնի, Գասպայի, Սէրայքէօյի եւ Տէնիզլիի մէջ երկու անգամ ցնցումներ զգացուեր են, որոց մին բաւական զօրաւոր : Մէնէմէնի մէջ բաւական վնաս պատահեր է : Իզմիրի եւ Տարընայի մէջ այս Գշ. ալ թեթեւ ցնցում մը զգացուեր է : Քիրմասիթի մէջ գեռ կը շարունակեն ցնցումները :

ԿԱՐԵՒՈՐ ԱՁԴ

Ազգային եւ օտար վարժարաններու մէջ դասախօսող ինչպէս նաեւ առեւտրական հրապարակին վրայ երկարատեւ փորձառութիւն ունեցող պատուաւոր տնձ մը, Անգլիերէն եւ Գաղղիերէն թղթակցութեանց եւ Տոմարակալութեան գործնական գասեր տալու պատրաստ է : Դիմել խմբագրատունս :

ԾԵԾՈՒԱԾ ԶՈՒՏ ԽԱՀՈՒԷ

Թիթեղեայ տուփի մէջ. 250 կրմ. 3 1/2 զրշ.

» » » 125 » 1 3/4 »

Աղխաները մի մոռնալ

Ռիօի առաջին տեսակէ սոյն խաւովէն առեւիբու մէջ զրուած կը ծախուի ի նպաստ Ս. Յակոբայ Հիւանդանոցին, ուրկէ գոյացած հասոյթով հարկւրաւոր աղքատներ եւ անոք մանուկներ պիտի խնամուին, հետեւաբար ամէն ոք այս խաւովէն գնելով, աման եւ աղէկ տեսակ խաւովէ առած ըլլալէ զատ, աղքատներուն եւ հիւանդանոցին օգնութիւն մըն ալ ըրած պիտի ըլլայ :

Կեդրոնատեղին է, Ղալաթիա, Եէնի ճամբ. ճատտէսի, Զինձիրլի խանին կից, թիւ 70. ուր պէտք է դիմել, անկասկած ըլլալու համար :

Կը ծախուի նաեւ հետեւալ խանութները եւ ուրիշ ծխովաճառներու եւ մանրավաճառներու քով :

Բերա, Շիրակ ճամբան 136 եւ 54 թիւ շաքարավաճառ Սարիմ աղայի խանութները :

Բանկալթիկ, մանրավաճառ Աճէմեան Գրիգոր աղաի խանութը :

Օրթաքէօյ, Քէթէնեան վիչէն աղայի խանութը :

ՊՐՊԱՆԻ

ՅՈՒՇԱՏԵՏՐ - ՕՐԱՑՈՅՑ

1898

Ի վաճառ ելած է հետեւեալ գներով :

Ընտիր լաթակազմ 2 1/2 գահեկան :

Նոյնը ոսկեզօծ ճգտանով 4 գահեկան :

» շակոէն եւ մատիաով 7 1/2 :

» ընտիր թղթի վրայ տպուած 15 :

Կեդրոնատեղիք՝ Սուլթան Համամ Պաղտատեան գրատուն թիւ 14 եւ 2. Թորոսեան գրատուն վալիտէ խան թիւ 16 :

Կը դանուի Բերա Հայ ծխովաճառաց քով, Կալաթա վրդրի եւ Ռօմանի թղթավաճառանոցը, եւ Պօլիա բոլոր գրավաճառաց քով :

ՀՈՆԿ - ԴՈՆԿ - ՍԷՅԼԱՆ - Կ. ՊՈԼԻՍ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍԱԴՈՒԼԵԱՆ

Ճեշալ պէյ խանի դրան կից թիւ 10

Ամենէն ընդարձակ թէյի վաճառատունն ի Կ.

Պոլիս, որ ճիւղեր ունի Օսմ.

Տէրութեան ամէն կողմերը :

Գաւառաց ապսպրանքները

փութով եւ խնամով կը դոր-

ժագրուին : Զինական, Հնդիկ,

Ճալայի եւ Սէյլանի ընտրե-

լագոյն թէյ.թ. ուղղակի բեր-

ուած հոս : Թէյի նոր հունձքն

սկսած է գալ : Զգուշացէք

սոյն վաճառանիշին կեղծե-

րէն :

Փնտուել ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍԱԴՈՒԼԵԱՆ պտորագրութիւնը :



ԿՈՐՈՒՍԵԱԼ ԿՏԱԿԸ

ԳԼՈՒԽ Ժ.

Կ Ի Տ Ա Կ Ը

Կիրգա ստամբակին համարձակ խօսուածքին եւ ուշիմութեանը խիստ հաւնեցաւ, եւ սպասաւորը ուտելիքները բերելու զրկելէ յետոյ:

— Հիմա խօսակցինք ըսաւ:

— Երէկ իրիկուան մօտ այն հրեայ սեղանաւորը զիս կանչելով ըսաւ թէ այս առաւօտուն խանին զրանը առջեւ սպասեմ եւ իւր ցոյց տալիք մարդուն հետեւելով, ուր բնակիլը հասկնալով իրեն իմաց տամ, փոխարէն առձեռն մէծիւս մը տուաւ, ոսկի մնալ յետոյ տալու պայմանաւ...

— Ահաւասիկ քեզի ես անոր տեղ երկու ոսկի կուտամ ըսելով երկու ոսկի զրաւ սեղանին վրայ:

Քու հետեւած մարդը հետը ընկեր ունէ՞ր:

— Խանէն մեկնած պահուս չունէր, բայց յետոյ հասկցայ որ ընկեր մը ունէր որ զինքը կամ կը լրտեսէր կամ կը հակէր:

— Այդ ի՞նչ ըսել է:

— Կեցիր բացատրեմ որ հասկնաս: Առաւօտուն երբ խանին զրան առջեւ կըսպասէի, սրճարանին դուռը նըստած բռնապետը մը տեսայ, ինծի այնպէս թուեցաւ թէ այդ բռնապետը պիտի ճանչնամ, իւր գէպքը ինձ անծանօթ չէր բայց ուր տեսած ըլլալս չէի յիշեր, աւելի մօտէն դիտելու համար, անսարքեր կերպով իրեն մօտեցայ, բայց իմ մարդս՝ որ մրափել կը ձեւացնէր, մէկէն ի մէկ տեղէն ելնելով խանէն դուռս ելաւ եւ Գօմիսիօն խանը մտնելով անյայտ եղաւ:

— Պէտք էիր իրեն հետեւիլ:

— Առաջին մտածումս այդ եղաւ, բայց յետոյ խորհեցայ թէ բացակայութեանս եթէ միւս մարդը զար, ոսկի մը պիտի կորսնցնէի, եկոյ տես որ չնչին բանի մը համար սրճարանապետը՝ անհամբոյր աւանակ մը, ինձ դէմ գայրացաւ, որմէ ստիպուեցայ պահ մը տեղս թողլով հեռանալ, տաւը վայրկեանի չափ անցնելէ վերջը երբ խանին զրան մօտեցայ սեղանաւորին հետ մաքուր հագուած պարոն մը տեսայ որ նոյն պահուն խանէն կը մեկնէր. հրեան նշանացի հասկցուց որ հետեւելիք մարդս է, այն խկոյն գործի սկսայ, երբ Գօմիսիօն խանին բազմութեան մէջէն կ'անցնէր, սրճարանը տեսած բռնապետը այդ պարոնին մօտենալով մէկ երկու բառ փառաց ու աներեւոյթ եղաւ:

— Դա՛րձեալ չը կրցիր ճանչնալ:

— Ինչպէս կըսեն ընդհանրապէս անունը լեզուիս ծայրն էր ու չէի կրնար արտասանել, բայց հետաքրքրութիւնս գոհացնելու համար շատ չըսպասեցի, մաքուր հագուած պարոնը Այնալըյի ճաշարանը մտնելով, ճաշասեղանի մը առջեւ նստաւ, ես ալ միւս զրան քով սըք-

լիով սպասեցի. հազիւ թէ հինգ վայրկեան անցած էր, բռնապետը զալով այն պարոնին քով նստաւ, բայց այս անգամ բռնապետի հագուածները հանած ըլլալուն ճանչցայ զինքը, ո՞վ ըլլայ կը հաւնիս:

— Է՛ս տղաս ըսաւ Կիրգա ժպտելով, ինչպէս կուգես որ ով ըլլալը գիտնամ:

— Նոյն ինքն գաբթան Տիմիթրօն էր:

— Գաբթան Տիմիթրօ՛. ո՞վ է այս գաբթան Տիմիթրօն:

— Ա՛... միթէ գաբթան Տիմիթրօն չե՞ս ճանչնար, բոլոր Բերայի ու Ղալաթիոյ մէջ իրեն հաւասարող չը կայ:

— Տիմիթրօ՛, կրկնեց Կիրգա խորհուն, եւ կասկած մը միտքը պաշարելով, կրնա՞ս այդ մարդուն նկարագիրը ընել ըսաւ:

— Բարձրահասակ, ալիսաւն մազերով, բայց հակառակ իւր տարիքին կրնայ ցուլ մը եղջիւրներէն բռնելով գետին տապալել...

— Ձախ ականջին մօտ ծնօտին վրայ սպի մը ունի՞:

— Այո, բայց ուսկից գիտես:

— Ճիշդ նոյն ինքն է, օ՛հ Աստուած իմ, հիմա կը հասկնամ ամեն բան ըսաւ գրեթէ ինքնիրեն խօսելով. Օհանը իւր ազդեցութեան ներքեւ առած է ապագային օգտուելու համար:

Կիրգայ սեղանէն ելնելով, խոհուն սենեկին մէջ սկսաւ երթեւեկել:

Ստամբակը այս առիթէն օգտուելով, մինչեւ այն ատեն սեղանին վրայ կեցած երկու ոսկին գրպանը զրաւ ու յետոյ վայրկեանէ մը ի վեր տիրող լռութիւնը խզելով ըսաւ:

— Տէր իմ, կերակուրս լմնցուցի, հիմա եթէ կուգես, այն պարոնին բնական տունը ցուցնեմ քեզ:

— Ինձ նայէ տղաս, ըսաւ Կիրգա, բոլորովին իր խորհրդոյր յարած. այն Տիմիթրօն զքեզ կը ճանչնայ:

— Ձեմ կարծեր... բայց կեցի, քանի մը օր առաջ իրեն հետ գործ մը ունեցայ, կարելի է որ զիս տեսնելով ճանչնայ:

— Իրեն հետ գործ մը ունեցա՞ր, ըսաւ Կիրգա զարմանօք ստամբակին նայելով:

— Եթէ գործ մը կըսեմ, ուղղակի իրեն հետ գործ մը չունէի, ընկերներէս մէկը Տիմիթրօյին խաղ մը խաղալ ուզեց, ես ալ իրեն աջակցեցայ. ահա այսչափ:

— Տիմիթրօյին խաղ մը խաղացիք կըսե՞ս... ահա այդ կը զարմացնէ զիս:

— Յիրաւի ալ սքանչելի խաղ մը խաղացինք իրեն. եթէ ուրիշ գործ չունենայիք՝ իրողութիւնը կը պատմէի...

Շարունակելի

Արժանատի Ա. ՍԱՔԱՅԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԵԱՆ

(Նախկին ՊՍՂՏՍՏԻՍԱՆ Ցայաբան)

Կ. Պոլիս, Մալթա Համաձ 14.